ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«04» նոյեմբերի 2019 թվականի N:551-ա ք.Գյումրի

«ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱԹՈԼՈԳՈԱՆԱՏՈՄԻԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ ՄԱՍՆԱԿՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՆՓՈՓՈԽ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N:992-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգի» 69-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով «Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2019 թվականի հոկտեմբերի 22-ին անցկացված մրցույթի արդյունքների վերաբերյալ մրցույթի մասնակից Աշոտ Շահբազյանի բողոքը քննարկող հանձնաժողովի 2019 թվականի հոկտեմբերի 28-ի եզրակացությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. «Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացված մրցույթի արդյունքը՝ մասնակից Աշոտ Շահբազյանի վերաբերյալ, թողնել անփոփոխ:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝